

Մայր Աթոռ Ս. Էջմիածին  
Տեղեկատվական Համակարգ  
Հեռ.: (374 10) 517 128  
Հեռախոս: (374 10) 517 301  
Էլ-փոստ: [holysee@etchmiadzin.am](mailto:holysee@etchmiadzin.am)  
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ *Հոկտեմբերի 6, 2008թ.*

### **Նոր հրատարակություն. «Ծառայության մեջ և եղբայրությամբ»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ լույս է տեսել Մայր Աթոռի Էկումենիկ և միջեկեղեցական կյանքը լուսաբանող «Ծառայության մեջ և եղբայրությամբ» վերտառությամբ հայերեն և անգլերեն լեզուներով պատկերազարդ գիրքը, որն անդրադառնում է արդի շրջանում Հայ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններին և Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության շրջանում Մայր Աթոռի միջեկեղեցական գործունեությանը: Գրքի գլխավոր խմբագիրը Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխատանու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանն է, հեղինակը՝ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: Անգլերեն թարգմանությունը կատարել է Մայր Աթոռի միաբան Տ. Վահան Ծ. վրդ. Հովհաննիսյանը:

Գրքի առաջին մասը սկսվում է Էկումենիզմի և Էկումենիկ շարժմանը Հայ Եկեղեցու մասնակցության մասին փոքրիկ առաջաբանով, որին հաջորդում է 1965 թ. Վազգեն Ա Վեհափառի եկեղեցիների միության հարցի շուրջ նշանավոր սրբատառ կոնդակը: Տեղեկատվությամբ հարուստ այս աշխատության մեջ անդրադարձ է կատարվում Հայ Եկեղեցու անդամակցությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, Հայոց Եկեղեցու ունեցած դերակատարությանն այդ կազմակերպության մեջ, Ուղղափառ և Արևելյան Ուղղափառ, Հռոմեական Կաթոլիկ, Անգլիկան, Ռեֆորմիստական Եկեղեցիների հետ մեր Եկեղեցու վարած աստվածաբանական երկխոսություններին և խորհրդակցություններին, տրվում է նաև Հայոց Հայրապետների և քույր Եկեղեցիների պետերի և առաջնորդների միջև ստորագրված համատեղ հայտարարությունների, հռչակագրերի և հաղորդագրությունների ժամանակագրական ցանկերը:

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է Գարեգին Բ Հայրապետի ժամանակ նոր թափ առած Մայր Աթոռի միջեկեղեցական և միջկրոնական գործունեությանը:

Վերջում տրված են Հայոց Հայրապետի միջկրոնական և միջեկեղեցական այցելությունների, Մայր Աթոռ կատարած այլ եկեղեցիների գահակալների և կրոնապետերի, Էկումենիկ կազմակերպությունների ղեկավարների և պատվիրակությունների, օտար բարձրաստիճան եկեղեցականների և Հայաստանում անցկացված համաժողովների ժամանակագրական ցանկը: